«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝	«Արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման շրջանակներում»
Առարկան՝	դասվար
Հետազոտող ուսուցիչ՝	Գալստյան Վարսենիկ Վիկտորի
Ուսումնական հաստատություն՝	«Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան N3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

1. Ներածություն……3
2. Հետազոտության նպատակը……5
3. Հետազոտության խնդիրները……5
4. Գլուխ 1. Սովորողի արժեհամակարգի վրա ազդող գործոնները……6
5. Գլուխ 2. Սոցիալականացումը որպես անձի արժեհամակարգի ձևավորման գործընթաց……9
6. Գլուխ 3. Մայրենիի դերը, որպես արժեհամակարգի ձևավորման միջոց……11
7. Եզրակացություն……16
8. Գրականություն……18

Ներածություն

Կատարված վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հասարակություն, սոցիալական խումբ, հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր և վարքականոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները։ Եվ այդ հասարակությանը պատկանող մարդը ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ։

Մոտեցումների և սահմանումների բազմատեսակության մեջ «արժեք» հասկացությունը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբի։ Առաջին խմբում ներառված են հասկացություններ, որոնց հեղինակներն արժեքները դիտում են որպես կարծիք պատկերացում կամ համզմունք (Մ. Ռոկիչին)։

Երկրորդ խմբում կարելի է ներառել այն սահմանումները, որոնց հեղինակները արժեքը կամ արժեքային կողմնորոշումը սահմանում են որպես սոցիալական դիրքորոշումների կամ հետաքրքրությունների տարատեսակ (Մ. Վեբեր, Դ. Ուզնաձե)։

Երրորդ խմբում միավորվում են կից հասկացություններ, ինչպիսիք են պահանջմունքներն ու շարժառիթները (Գ. Դիլիգենսկի, Ֆ. Վասիլյուկ)։

Հոգեբանական գիտության բնագավառում արժեքների մեկնաբանության բազմազանության մեջ առավել տարածում ունի այն մոտեցումը, որում արժեքը դիտարկվում է որպես հասարակության կենսագործունեության որոշակի արդյունք։

Հոգեբանական գիտության բնագավառում անձնային արժեքների հասկացման գերակայող մոտեցումներից մեկն այն է, որ արժեքը դիտվում է որպես պահանջմունքրին ու շարժառիթներին համարժեք հասկացություն։ Մասնավորապես՝ անձնային արժեքները և իմաստը կենտրոնական տեղ են զբաղեցնում հումանիստական հոգեբանության մեջ։

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում։ Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա։

Նա այդ գործընթացների մասնակից է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը։ Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը։

Հետազոտության նպատակը

- Ուսումնասիրել, ներկայացնել հանրակրթական դպրոցներում արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ։
- Պարզաբանել արժեքային համակարգի դերը դասաժամերին։
- Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը։
- Բացահայտել ազգային արժեհամակարգի թույլ կողմերը։

Հետազոտության խնդիրները

- Հանրակրթական դպրոցում ուսումնասիրվող տարբեր առարկաների դասավանդման ընթացքում երեխաների մոտ ձևավորված արժեքների բացահայտում։
- Խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները։
- Ազգային գիտակցության ձևավորումը։

Հարց. Ո՞րն է ազգային արժեհամակարգի թույլ կողմը։

Գլուխ 1. Սովորողի արժեհամակարգի վրա ազդող գործոնները։

Հարկ է նշել, որ արժեհամակարգը ձևավորվում և փոխանցվում է ամբողջ կյանքի ընթացքում և ունի տարիքային առանձնահատկություններ։

Սովորողները իրենց տարիքային, սեռային անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են իրենց նույնացնել այս կամ այն հերոսի հետ, կրկնօրինակելով նրանց վարքի ոճը և այլն։

Սովորողների արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով։ Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, վարքականոնների, հայացքների յուրացումը միշտ չէ որ համապատասխանում է հասարկության կողմից ընդունված արժեքներին ու խրախուսելի չափանիշներին։ Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելով։

Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»։

Սովորողների արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է։ Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է սովորողի վարքի, շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում ազատ ժամանակ անցկացնելու ձևում, ապրելակերպում։

Սովորողների անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ)։

Հեղինակավոր անձինք կարող են լինել նաև դպրոցի տնօրենը, դասղեկը, որևէ դերասան…

Սովորողները կարող են ստանալ արժենքերի վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այնպես էլ բացասական: Ընդ որում բացասասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի նաև միջամտություն:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ինչպես ընտանիքում, այնպես էլ ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով:

Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք:

Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

Աճող սերնդի դաստիարակչության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Ուստի կարևոր խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հիմքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Ընդ որում կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ՝ վերաբերմունք աշխարհի նկատմամբ և հարբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերություն ինքն իր հետ:

Արժեհամակարգի ձևավորման գործոն է համարվում նաև տեղեկատվական տեխնոլոգիաները (համացանցային լրատվություն, հեռուստատեսություն, մամուլ)։

Սովորողների անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են, թե հասակակիցների, թե ծնողների և թե հեղինակությունների հետ։

Ոչ պակաս կարևոր գործոն է հանդիսանում սովորողի էթնիկ պատկանելիությունը։

Արժեքների մեծ մասը սնվում են էթնիկական նորմերից, ձևավորվում դրանց շնորհիվ։ Էթնիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի։

Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում։

Նորմերը տարբեր են քաղաքում և գյուղում։ Էթնիկական նորմերը թելադրում են վարքագիծ, որպեսզի մարդը բնականոն դրանց համապատասխանի։ Զարգացած մշակույթներն ունեն զարգացած էթնիկական նորմեր։ Եվ երբ դրանք քայքայվում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ։ Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը և տարածվում է անբարոյականությունը։

Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել։

Հենց այս պատճառով էլ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը։ Այնպիսի արժեհամակարգի, որը սովորողներին կդարձնի հայրենասեր, բարեխիղճ, հումանիստ քաղաքացի։

Գլուխ 2. Սոցիալականացումը որպես անձի արժեհամակարգի ձևավորման գործընթաց

Սոցիալականացումը անձի կողմից տվյալ հասարակության մեջ ընդունված սոցիալական նորմերի, արժեքների և գիտելիքների յուրացման գործընթաց է։

Այն թույլ է տալիս անձին համարվելու տվյալ սոցիալական խմբի անդամ և ներկայանալու որպես այդպիսին այլ սոցիալական խմբերին։ Անձը ընդգրկվում է սոցիալականացման գործընթացի մեջ կյանքի ողջ ընթացքում, առանց որի նա չի կարող ստանձնել իր վրա որևէ հասարակայնորեն կարևորվող սոցիալական դեր։

Սոցիալականացման բովանդակությունն բնորոշվում է հասարակությունում նշանակալից սոցիալական նորմերի ու արժեքների, արժեհամակարգի տիրապետմամբ։ Ցանկացած հասարակության մեջ արժեհամակարգի ձևավորման վրա շատ մեծ ազդեցություն ունի տվյալ հասարակության կրոնական պատկանելությունը։

Ա. Վ. Պետրովսկին առանձնացնում է սոցիալականացման ընթացքում անձի զարգացման երեք փուլ՝ ադապտացումը, անձնավորացումը և ինտեգրումը։

Առաջին՝ ադապտացիոն փուլը համընկնում է մանկության հետ, երբ անձը յուրացնում է իրեն շրջապատող մարդկանց սոցիալական փորձը և հանդիսանում է դաստիարակության և կրթության օբյեկտ։

Երկրորդ՝ անձնավորման փուլում կարևորվում է նախկինում յուրացրած արժեքների և նորմերի անձի վերարտադրության կարողությունը։

Երրորդ՝ ինտեգրման փուլը հանդես է գալիս հասարակության հետ անձի զոյատևման համաչափությամբ և ներդաշնակությամբ։ Որքանով անձը ընդունում է հասարակության արժեքներն ու ներմերը, այնքանով նա համարվում է սոցիալականացված։

Անձը իր ողջ կյանքի ընթացքում է հանդես գալիս սոցիասլական հարաբերությունների թե օբյեկտի, թե սուբյեկտի կարգավիճակում։ Այսպիսով,

սոցիալիզացիայի օբյեկտ հանդիսացող անձը աստիճանաբար վեր է ածվում հասարակության այլ անդամների նկատմամբ սուբյեկտի և ինքն է ընդգրկվում հասարակական արժեքների փոխանցման գործընթացի մեջ։

Ամփոփելով սոցիալականացման տեսական եզրակացությունները, Ա. Վ. Մուդրիկը առանձնացնում է երկու մակարդակ, առաջինի դեպքում փոքր խմբերում միջանձնային հաղորդակցում, ինչպիսիք են ընտանիք, հասակակիցներ։ Երկրորդ մակարդակում ֆորմալ փոխհարաբերություններ՝ կրթական, զինվորական ու պետական այլ հասարակություններում։

Անձը գնահատում է սոցիալական տարբեր ինստիտուտներին, ընտանիքին և իր սոցիումին բնորոշ արժեքները, ընդունում կամ հակառակը, մերժում է դրանցից մի քանիսը։ Արդյունքում անձը ընտրում է իր համար կարևորություն ներկայացնող արժեքների մի համալիր, համապատասխան որի ներկայանում է հասարկությանը։ Սթերեոտիպերը որքանով անձի համար հարազատ են, այդքանով էլ ընդունելի են։

Ժ. Պիաժեն սկիզբ է դրել մի շարք ուսումնասիրությունների, որոնք անդրադառնում են էթնիկ ինքնության խնդիրների գիտակցմանը երեխաների մետ։ Նա առանձնացնում է երեք տարիքային փուլ (2-2,5տ, 8-9տ, 12-13տ), որոնց արդյունքում երեխայի մոտ ձևավորվում է էթնիկ նույնականացման գիտակցություն։

Սոցիալականացման ընդհանուր գործընթացների մեջ անհրաժեշտ է նշել էթնոմշակութային սոցիալականացման կարևորությունը, որը տեղի է ունենում էթնիկ խմբերի հետ անձի փոխգործողության ընթացքում։

Սոցիալականացման մեխանիզմներից որևէ մեկը առանձին վերցրած չի կարող պայմանավորել անձի էթնիկության ամբողջական արժեհամակարգը։

Անձի էթնիկ ինքնության սոցիալականացման գործում առավելապես կարևորվում է սոցիալականացման կրթական ինստիտուտը, որի նպատակաուղղված գործունեությունը խթանում է էթնոմետ արժեհամակարգի ձևավորումը։

Գլուխ 3. Մայրենիի դերը որպես արժեհամակարգի ձևավորման միջոց:

Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի է թվում: Արագընթաց փոփոխությունների, նոր արժեքների հորձանուտում երիտասարդ սերունդը դժվարանում է իր համար արժեքային կողմորոշումներ ձևավորել: Իսկ արժեքների ձևավորումը կատարվում է կրթության միջոցով և կրթության ֆոնի վրա: Կրթության ողնաշարն ու կրթության առանցքը արժեհամակարգ է, և այստեղ մեծ ու անփոխարինելի է «Մայրենիի» դերը: Առհասարակ գրականությունն իր մեջ ներառում է դաստիարակչական մեծ ներուժ՝ արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար:

Տարրական դասարաններում գործածվող մայրենիի դասագրքերում զետեղված բազմաթիվ դասանյութեր նպաստում են որպեսզի սովորողների մոտ ձևավորվի՝ հայրենասիրություն, ընկերասիրություն, ազնվություն, փոխօգնության ձեռք մեկնելու կարողություն, միասնականություն:

Օրինակ՝ Մայրենի 3-րդ դասարան:

Իվան Կռիլով: Կապապը, խեցգետինը և գայլաձուկը:

Ինչքան կուզեն՝ իրենց տանջեն,
Երբ ընկերներն համերաշխ չեն,
Օգուտ չունեն բռնած գործից.
Այ, մի առակ կյանքի փորձից,
Թեև անցուկ, բայց ոչ մոռցուկ:
Մի կարապ, մի խեցգետին, մի գայլաձուկ
Բարձած սայլը տեղից քաշել ուզեցին,
Եվ երեքով եկան սայլին լծվեցին,
Ինչ են անում, ինչ չեն անում,
Սայլը տեղից չի էլ շարժվում.

Շատ թեթև է բեռը թվում,

Բայց կարապը վեր է թևում,

Խեցգետինը քաշում է հետ,

Գայլաձուկն էլ հո դեպի գետ:

Ով է արդար, ով մեղավոր,

Մենք չդատենք: Բանն այն է, որ

Մինչև այսօր թե սայլ, թե բեռ

Նույն տեղն են դեռ:

https://www.youtube.com/watch?v=okWxhZGusHc

Այս դասանյութը շատ ակներև օրինակ է, երբ բացակայում է միասնականությունը, համագործակցելու կարողությունը, հանրային շահը սեփականից վեր դասելու գիտակցումն ու կարողությունը, որի արդյունքում նախապես սահմանված նպատակը չի իրագործվում: Ստեղծագործությունը հնարավորություն է տալիս նաև վերլուծելու և «բացահայտելու» պատճառահետևանքային կապեր (տարբեր արժեհամակարգի անհամատեղելիություն, բախում): Քանի որ, երբ առակի հերոսները դիտարկվում են առանձին-առանձին, ապա յուրաքանչյուրն էլ ճշմարտացի է յուրովի (էթնիկ արժեհամակարգ): Եվ բնավ պարտադիր չէ, որ սովորողները կուրորեն ինտեգրվեն օտար արժեհամակարգին:

Ուստի մայրենիի տարբեր դասանյութերի միջոցով պետք է ընկալելի և ընդունելի դարձնել համամարդկային արժեքները՝ չմոռանալով ազգային առանձնահատկությունների մասին:

Մեկ այլ ստեղծագործություն՝ Մայրենի 4. Աթաբեկ Խնկոյան «Խոզն ու ագռավը» առակ-բանաստեղծություն:

Մի դարավոր կաղնու տակ

Խոզը ագահ ու անհագ,

Այնքան կաղին զխտվեց,

Որ ցած ընկավ ու փռվեց:

Զարթնեց քնից ու տակից

Ծառը փորեց արմատից։

— Ի՞նչ ես անում, այ անգետ, —

Ագռավն ասաց վերևից։

—Խա՞ղ ես անում ծառի հետ,

Կչորանա արևից։

— Չորանում է՝ չորանա,

Ինձ ի՞նչ օգուտ՝ զորանա,

Միայն կաղին ունենամ,

Ուտեմ, պառկեմ, գիրանամ։

— Այ ապերախտ կենդանի,

Ով քեզ նման վիզ ունի՝

Իր կույր աչքով չի տեսնի,

Որ կաղինը հյութալի

Լոկ այս ծառն է ձեզ տալի, —

Ագռավն ասավ խոզուկին,

Էն կախ գլուխ կուզիկին։

Հարցեր և առաջադրանքներ։

1. Նկարագրիր խոզին։

2. Նկարագրիր ագռավին։

3. Դուրս գրիր անծանոթ բառերը կամ բառակապակցությունները։

4. Նշիր տեքստում խոզին նկարագրող հատվածը։

5.Կարդա առակը և նշիր, որ հատվածը դուր եկավ, որ հատվածը դուր չեկավ. հիմնավորիր։

6. Աշխատանք ուղղագրական բառերի շուրջ։

7. Արտահայտիր քո վերաբերմունքը։

8. Ի՞նչ է սովորեցնում առակը։

9. Ցանկանում ես արդյոք դիտել առակը կամ էլ ունկնդրել։

10. Փորձիր նկարել որևէ դրվագ առակից։

https://www.youtube.com/watch?v=mL_FL2z6pK4

Նմանատիպ հարցերի շուրջ կարելի է ծավալել ուսումնական գործընթաց, որի արդյունքում սովորողները կյուրացնեն դասանյութը։ Սակայն այն ունի դաստիարակչական մեծ ազդեցություն։ Եվ այն շատ ակներև է դարձնում եսասիրությունն ու եսակենտրոն լինելը։ Միաժամանակ ցույց է տալիս, որ չկա հանրային շահի գիտակցում և առավել ևս գերակայում։ Երբ սեփական շահերը ստորադասվում են հանրային գերակա շահին։

Աշակերտները ցածր դասարաններում սիրով կատարում են հանրօգուտ աշխատանք, սակայն մեծանալով սկսում են խուսափել՝ բերելով տարբեր պատճառաբանություններ։ Օրինակ երբ դպրոցում շաբաթօրյակ է, կամ անհրաժեշտ է ձևավորել դասարանական միջոցառման դահլիճը, կամ էլ հերթապահություն անել՝ մաքրելով դասասենյակը։

Մայրենիի դասագրքերում քիչ չեն զետեղված այնպիսի դասանյութեր, որոնք որպես բացառիկ արժեք են ներկայացնում հայրենասիրությունը։

Մայրենի 4-րդ դասարան- «Փոքրիկ հայրենասերը», «Սասունցի Դավիթ», «Հայաստան», «Ազգային երգը» և այլն։

Զուր չէ ասված, որ պետությունը կործանվում է իր անհայրենիք քաղաքացիների շնորհիվ։

Տարրական դասարաններում մայրենիի ուսուցումն իրականացվում է ճանաչողական-կիրառական արժեք ունեցող լեզվական գործնական մատչելի գիտելիքների յուրացման և գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցման ճանապարհով։ Մայրենիի խոսքի ընդարձակ հնարավորություններն օգտագործվում են երեխաների մեջ բարձրարժեք անձնային որակների ձևավորման և զանգացմանն գործում, ընդլայնվում են նրանց աշխարհաճանաչողությունն ու

ինքնաճանաչողությունը, ինքնակրթությունը, ինքնազարգացման և ինքնադրսևորման հնարավորությունները: Հանրակրթության առաջին աստիճանը տարրական ընդհանուր կրթության չափորոշիչներով նախատեսված պահանջների կատարումն ապահովում է տարրական դպրոցի շրջանավարտի ամբողջական նկարագրի ձևավորումը, որն առանձնացվում է երեք հիմնական ուղղություններով՝

- գիտելիքների պաշարի ձեռքբերում
- կարողությունների և հմտությունների ձեռքբերում
- արժեհամակարգի ձևավում:

Ըստ մայրենիի հանրակրթական ծրագրերի արժեհամակրգի ձեռքբերման մակարդակն իր մեջ ներառում է՝

- Հայրենասիրական, ազգային և համամարդկային արժեքների յուրացում:
- Իր ընտանիքին, դպրոցական կոլեկտիվին պատկանելիության գիտակցում:
- Պատասխանատվություն սեփական արարքների համար:
- Շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար վերաբերմունք (էթնիկական և բարոյական նորմերի ձևավորում):

Դասագրքերում ներկայացված են հայ և արտասահմանյան ստեղծագործողների կողմից գրված հատընտիր նմուշներ, որոնք սովորողների մեջ ձևավորում են այնպիսի բարձր արժեքներ, ինչպիսիք են հայրենասիրությունը, արդարամտությունը, հանդուրժողականությունը, պատասխանատվության զգացումը, փոխօգնության ձեռք մեկնելու կարողությունը, ընկերասիրությունը, հավատարմությունը, հումանիզմը, օրինապահությունը, նախաձեռնողականությունը: Եվ յուրաքանչյուր ստեղծագործություն ուսումնասիրելիս, ուսուցիչը ջանք չի խնայում ստեղծագործության գաղափարախոսությունը բերել իրական կյանք, կապել սովորողի կենսափորձի հետ և վեր հանել հեղինակի ներկայացրած տողատակերը:

Այսպիսով մայրենիի ուսումնասիրման շրջանակում սովորողների մոտ ձևավորվում է արժեքների համալիր, որն էլ հետագայում ձևավորում է անձնային որակներ:

Եզրակացություն

Արագ փոփոխվող աշխարհում ժամանակակից հասարակությունը մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է արժեքային կողմնորոշումների վրա: Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, որովհետև դրանք սկիզբ են առնում կրոնական, ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևոր է անհատ քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը, քաղաքացիական հասարակության կայացումը:

Արժեհամակարգի ձևավորումը շարունակական գործընթաց է և կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Եվ քանի որ երեխաներն իրենց օրվա ավելի մեծ մասն անցկացնում են ուսումնական հաստատություններում, հրամայական է դառնում, որ ուսուցիչները ստանձնեն իդեալական միջավայր ստեղծելու պատասխանատվությունը:

Սովորողների մեջ արժեքային համակարգ է ձևավորվում սոցիալականացման ընթացքում, միկրո և մակրո միջավայրերում, ինչպես նաև դասավանդվող տարբեր առարկաների շրջանակներում: Մասնավորապես մեծ է մայրենիի դերը և էթնիկ պատկանելիությունը:

Արժեքային համակարգը անքակտելիորեն կապված է մշակույթի հետ, քանզի մարդը դրսևորվում է սոցիումի մեջ և իր վրա է կրում տվյալ միջավայրի մշակութային փոփոխությունները: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղները կլինեն իրական արժեքները: Դասավանդվող տարբեր առարկաների ճիշտ համագործակցության և միջառարկայական կապերի շնորհիվ է, որ սովորողների մեջ արժեքները ձևավորվում են ավելի ընդլայնված ու խորը:

Ուստի սովորողների արժեքային համակարգը բազմակողմանի զարգացնելու համար հարկ է նրանց ավելի շատ ներառել արտադասարանական միջոցառումների մեջ։

Եվ ի վերջո, յուրաքանչյուր ուսուցչի համար աննկարագրելի բերկրանք է տեսնել իր կատարած աշխատանքի պտուղները գործնականում կիրառված։ Սովորողը հանդիսանում է ցանկալի արժեհամակարգի կրողը և փոխանցողը։

Իսկ էթնիկ արժեհամակարգի թույլ կողմ հանդիսանում է միասնականության պակասը և հանրային գերակա շահի անտեսումը։

Գրականության ցանկ

1. Զեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017, 191 էջ:

2. Ананьев Б. Г., О проблемах современного человекознания. М.: Наука, 1977, 344 с.

3. Андреева Г. М., Психология социального познания. М.: АспектПресс, 2000, 288 с.

4. Афанасев В. Г., Социальная информация и управление обществом. М.: Политиздат, 1975, 408 с.

5. Бронфенбреннер У., Два мира детства. Дети в США и СССР: Пер. С англ. - М., 1976, 165 с.

6. Вебер М., Основные социологические понятия, Избр. произведения, Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова. М.: Прогресс, 1990. сс. 602-643.

7. Выготский Л. С., Педагогическая психология / под ред. В. В. Давыдова. - М.: Педагогика-Пресс, 1996. - 536 с.

8. Журавлева Н. А., Психология социальных изменений: ценностный подход. - М.: –зд-во «Институт психологии РАН», 2013. – 524 с.

9. Здравомыслов А. Г., Потребности, интересы, ценности. М.: Политиздат, 1986. – 222 с.

10. Крайг Г., Психология развития [Текст]: Пер. с англ. / Г. Крайг. – СПб.: Питер, 2000. – 992 с.

11. Леонтьев А. Н., Деятельность, сознание, личность. - М.: Политиздат, 1975, -304 с.

12. Леонтев Д. А., Развитие личностных ценностей в общественном контексте, Вестник Московского Университета. Сер. 14. Психология. 1997. №1. сс. 20-27.

13. Мудрик А. В., Социализация человека: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений, М.: “Издательский центр Академия”, 2004, 304 с.

14. Петровский А. В., Личность. Деятельность. Коллектив. М.: Политиздат, 1982, 255 с.

15. Узнадзе Д. Н.,Психология установки. СПб.:Питер, 2001.«Психология-классика», 416с.

16. Флейвелл Дж., Генетическая психология Жана Пиаже [Текст]:Пер. с англ. / Дж. Флейвелл. М.: Просвещение, 1967, 623 с.

17. Яницкий М. С., Ценностные ориентации личности как динамическая система. Кемерово: Кузбассвузиздат, 2000, 204 с.

18. Frankl V. E., Man's search for meaning: The classic tribute to hope from the Holocaust. Rider, UK, 2004, p. 147.

19. Kohlberg L., Moral stages and moralization: The cognitive developmental approach [Text] / L. Kohlberg // Moral development and behavior: Theory research and Social issues. - N.Y., 1976. - P. 31-53. (287)

20. Rokeach M., The Nature of Human Values. N.Y.: Hie Free Press, 1973.